ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 7, 1959 Общественные науки

ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՎՈՒ

ՏԱՇՔԵՆԴԻ ՄԻԱՑՅԱԼ ԳԻՏԱԿԱՆ ՍԵՍԻԱՆ

1959 թ. մայիսի 26—29-ը Տաշքենդում տեղի ունեցավ ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի, Ուզբեկական, Տաջիկական, Կիրգիզական, Թուրքմենական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Գիտությունների ակադեմիաների միացյալ գիտական սեսիան, նվիրված Միջին Ասիայի Ռուսաստանին միանալու պրոգրեսիվ նշանակությանը։

Սեսիային, բացի Մոսկվայի, Լենինգրադի և Միջին Ասիայի ռեսպուբլիկաների բազմանդամ դելեգացիաներից, մասնակցում էին նաև միութենական և ավտոնոմ գրեթե բոլոր ռեսպուբլիկաների պատվիրակությունները։

Կազմկոմիտեի նախագահ, Ուզբեկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Ա. Արդուլաևը, բացելով սեսիան, համառոտակի նշեց քննության դրված խնդրի գիտական, քաղաքական և միջազգային կարևոր նշանակությունը։

Սեսիան լսեց Միջին Ասիայի Ռուսաստանին միացնելու, հատկապես նրա պրոգրեսիվ հետևանքների տարբեր հարցերին նվիրված վեց զեկուցում, որոնց շուրջը տեղի ունեցավ մտքերի լայն փոխանակում։

«Միջին Ասիայի միացումը Ռուսաստանին» զեկուցումով հանդես եկավ Տաջիկական ՍՍՌ ԳԱ իսկական անդամ Ս. Ռաջաբովը։

Նախառևոլյուցիոն շրջանում Ռուսաստանի և արտասահմանյան երկրների արևելագետները, ճանապարհորդները, հրապարակախոսները և ռազմական գործիչները տարբեր կողմերից ու տարբեր դիրքերից են գնահատել Միջին Ասիան Ռուսաստանին միանալու պատմական իրադարձությունը։ Սակայն այդ բոլոր աշխատություններում էլ հարցը ճշմարտացի, գիտական մեկնաբանում չի ստացել։ Նրանցում չի բացահայտվել միջինասիական ժողովուրդների սոցիալ-տնտեսական դրությունը, ներքին ու արտաքին քաղաքական այն պայմանները, որոնք հանգեցրին Թուրքեստանի գրավմանը և որ ամենակարևորն է չի արտացոլվել այդ երկրամասը ռուսական պետությանը միացնելու հետևանքները։ Այնուհետև զեկուցողը նշում է, որ ոչ ռուս ժողովուրդների, այդ թվում նաև Միջին Ասիայի ժողովուրդների միանալը Ռուսաստանին սխալ է արտայոլվել Մ. Պոկրովսկու և նրա շկոլայի կողմից։

Թուրքեստանը Ռուսաստանին միացնելու գնահատության հարցում, միանդամայն անընդունելի է նաև այսպես կոչված «չարիքների փոքրագույն» ֆորմուլան։

Թուրքեստանը Ռուսաստանին միացնելը, ասում է Ս. Ռաջաբովը, խոշոր պրոգրեսիվ նշանակություն ունեցող մի երևույթ էր։ Այն նախապատրաստված է եղել ռուսական և միջինասիական ժողովուրդների նախընթաց պատմությամբ, նրանց տնտեսական, քաղաքական և կուլտուրական կապերի զարգացմամբ։ Այդ կապերը գալիս են դարերի խորքից, նրանք հետագա զարգացում են

ատանում ռուսական կենտրոնացված պետության ձևավորումից հետո, Պատմական այդ կապերի ու շփումների ընթացքում գնալով ավելի ու ավելի է երևան գալիս Ռուսաստանի քաղաքակրթող դերը Թուրքեստանի ժողովուրդների նկատմամբ։

Միջին Ասիայի արտաքին քաղաքական վիճակը այնպիսին էր և պատմական իրադարձությունները այն ուղղությամբ էին ընթանում, որ նա պետք է ընկներ Անգլիայի տիրապետության տակ և դառնար նրա գաղութը և կամ կուլ գնար արևելյան խոշոր դեսպոտական պետություններից մեկին՝ սուլթանական Թուրքիային կամ շահական Պարսկաստանին։

Թուրքեստանի համար XIX դարի երկրորդ կեսին ստեղծված այդ պայմաններում միակ ելքը Ռուսաստանին միանալու մեջ էր։

Ղազախստանի միացումից հետո 1864 թ. սկսվեց և արդեն 1867 թ. Ռուսաստանին միացվեց Միջին Ասիայի տերիտորիայի մեծ մասը, ուր կազմակերպվեց Թուրքեստանի նահանգը՝ Տաշքենդ կենտրոնով։

Ժողովրդական մասսաները տառապելով ֆեոդալների դաժան ինքնակամությունից, հարկային ծանր լծից ու միջֆեոդալական ընդհարումներից, շահագրգռված էին ու ձգտում էին միանալ Ռուսաստանին, որից իրենց դրության լավացման սպասումներ և ակնկալություններ ունեին։ Միայն տեղական իշխողների առանձին խմբեր աշխատում էին ինչ գնով էլ լինի, պահպանել հին կարգերն ու իրենց ինքնուրույնությունը և այդ նպատակով կազմակերպում էին դիմադրություն և առանձին հակառուսական ապստամբություններ։ Չնայած ռեակցիոն ֆեոդալական վերնախավի, մուսուլմանական հոգևորականության ու անգլիական գործակալության գործունեությանը, ժողովրդական մասսաները իրենց հիմնական մասով ձգտում էին միանալ Ռուսաստանին։ Հասարակ ժողովուրդը ասում էր. «Ռուսը եկավ՝ լարիքը եկավ»։

Միջին Ասիայի և Ղազախստանի առաջավոր մտածողները՝ Ա. Կուսանբաև (1845—1904 թթ.), Ա. Դոնիշ (1827—1897 թթ.), Ֆուրկատ (1858—1909 թթ.), և շատ ուրիշներ տեսնում և հասկանում էին Թուրքեստանը Ռուսաստանին միանալու խոշոր պրոգրեսիվ դերը։ Այդ բանը արտացոլվել է նրանց աշխատություններում ու ասույթներում.

Մյուս կողմից, տնտեսական և քաղաքական տեսակետից, Միջին Ասիայի միացումը համապատասխանում էր ռուսական կապիտալիզմի զարգացման պահանջներին ու շահերին։ Թուրքեստանի միացման հետևանքով հսկայական չափով մեծացավ Ռուսաստանի տերիտորիան, ամրապնդվեց նրա արևելյան սահմանները։ Ցարիզմը ձեռք բերեց արտահանման ընդարձակ շուկա և հումքի անսպառ աղբյուր։ Միջին Ասիան դարձավ գաղութ և դաժանորեն շահագործվում էր։

Այնուհետև զեկուցողը անդրադառնում է Թուրքեստանը Ռուսաստանին միացնելու սոցիալ-տնտեսական, քաղաքական և կուլտուրական պրոգրեսիվ հետևանքներին։

«Միջինասիական ժողովուրդների շփումը ռուս ժողովրդի ռևոլյուցիոն պայքարին, որպես Միջին Ասիան Ռուսաստանին միացնելու կարևորագույն պրոգրեսիվ հետևանք» թեմայով հանդես եկավ պատմ. գիտ. դոկտոր Ա. Պյասկովսկին (ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիա)։

Միջին Ասիայի պատմության վերաբերյալ ամենից ավելի տարածված սխալը, ասում է զեկուցողը, դա ցարիզմի ու նրա դերի գունազարդումն է։ Դրա

պատճառն այն է, որ շփոթվում է երկու տարբեր հարցեր։ Ցարական ինքնակալության զավթողական-գաղութային քաղաքականությունը Միջին Ասիայում, ինչպես նրան բազմիցս բնութագրել է Վ. Ի. Լենինը, այն օբյեկտիվ-պրոգրեսիվ գերի հետ, որը կատարվել է Միջին Ասիայում և մյուս ազգային ծայրամասերում նրանց Ռուսաստանին միացնելու հետևանքով։ Ամենևին հաշվի չի առնվում պատմական այն իրողությունը, որ Ռուսաստանի ազդեցության շնորհիվ, Միջին Ասիայի ժողովուրդների տնտեսական, քաղաքական ու կուլտուրական կյանքում կատարվող ամեն մի առաջադիմական քայլ իրագործվել է ցարիզմի կամքին ու նրա շահագործողական, ազգային-գաղութային քաղաքականության հակառակ։

Ցարիզմը շահագրգռված չէր կապիտալիստական հարաբերությունների զարգացման գործում, ընդհակառակը աշխատում էր պահպանել հին նահապետական-ֆեոդալական հարաբերությունները։ Սակայն տնտեսական աներեր օրենքների հիման վրա կապիտալիզմը ցարիզմի կամքին հակառակ իր համար ճանապարհ հարթեց և զարգացավ Միջին Ասիայում։

Ցարիզմը վարում էր այնպիսի քաղաքականություն, որպեսզի արգելակի տեղական պրոլետարական կադրերի առաջացման պրոցեսը, չնայած դրան հենց այդ ժամանակ Թուրքեստանում սկսեց ձևավորվել արդյունաբերական պրոլետարիատը։

Երկաթուղիները ցարիզմը կառուցում էր իր ռեակցիոն գաղութային նպատակների իրականացման համար, սակայն հակառակ նրա ցանկության, ինչպես հայտնի է, երկաթուղայինները միաժամանակ խոշոր պրոգրեսիվ դեր են կատարել։

Դեմոկրատական ու սոցիալիստական առաջավոր իդեաները, հասկանալի է, թափանցել են Միջին Ասիա ցարիզմի ցանկությանն ու կամքին հակառակ։

Այնուհետև զեկուցողը նշում էր, որ Միջին Ասիայում ցարիզմի ռեակցիոն դերը հավաստող նման փաստերը կարելի է շատ բերել, սակայն այդ ամենը ոչ մի կապ չունեն Միջին Ասիան Ռուսաստանին միացնելու պրոգրեսիվ հետևանքների, Ռուսաստանի և ռուս ժողովրդի ազդեցությամբ կատարվող պրոգրեսիվ պրոցեսների հետ։ Անհրաժեշտ է տարբերություն դնել ցարիզմի և ռուս ժողովրդի միջև, ժողովուրդ, որի լավագույն զավակները ոչ մի կապ չունեին և խարազանում էին ցարիզմի այդ քաղաքականությունը։ Այսպիսով, Միջին Ասիան Ռուսաստանին միացնելու պրոգրեսիվ նշանակության վերհանումը ամենևին չի հակասում ցարիզմի գծած ու ավազակային քաղաքականության ընդունմանը՝ այդ երկրամասում։

Հետևաբար ամենևին հարկ չկա գունազարդելու ցարական միապետությունը, մեղմացնելու նրա ռեակցիոն քաղաքականությունը։ Քաջ հայտնի է, որ Միջին Ասիայի գերակշռող մասը ցարիզմի կողմից գրավվել է զենքի ուժով։ Պատահական չէ, որ Գեոք-Թափա, Կզըլ-Արվատ, Ջիմքենդ, Ջիզակ, Խոջենդ, Սամարկանդ, Տաշքենդ և այլ ամրոցներ ու քաղաքներ գրավվել են մեծ դժվարությամբ, մի քանի անգամ պաշարելուց հետո միայն։

Միջին Ասիան Ռուսաստանին միացնելու ժամանակ երկու տենդենց է երևան եկել, ընդ որում երկուսն էլ պրոգրեսիվ են եղել։ Առաջինը ուղղված է եղել ազգային պարփակվածության ու ֆեոդալական մասնատվածության ոչնչացմանը և ժողովուրդների տնտեսական մերձեցմանը։ Երկրորդը՝ հանդես են եկել այդ միացումը բռնությամբ կատարելու փաստի դեմ և պահանջել է ժողովուրդների

միացումը կամավորության ու համագործակցության հիմունքներով, որը, ի դեպ այն ժամանակվա պատմական պայմաններում չէր կարող իրագործվել։

Որոշ պատմաբաններ կարծում են միացման կարևորագույն պրոգրեսիվ նշանակությունը կայանում է նրանում, որ Թուրքեստանում զարգացել է կապիտալիզմը, քայքայվել և աստիճանաբար անհայտացել է նատուրալ տնտեսությունն ու ֆեոդալական հարաբերությունները։

Չժխտելով տնտեսական այդ ֆակտորի կատարած առաջադիմական դերը, Ա. Պլասկովսկին գտնում է, որ հիմնականը, կարևորագույն պրոգրեսիվը դա Ասիայի ժողովուրդների շփումն է ռուս ժողովրդի ռևոլյուցիոն պայքարի հետ։ Դրա շնորհիվ միայն նախկին Թուրքեստանի ժողովուրդները ստացան իրենց ազգային ազատագրումը։

Միացումից հետո Միջին Ասիան սերտորեն կապված լինելով մետրոպոլիայի հետ սկսեց արագորեն բնակեցվել ռուս բնակչությամբ։ Բավական է ասել, որ XX դարի սկզբներին արդեն երկրամասի երկաթուղիներում աշխատում էին 15.000 ռուս բանվորներ և այնտեղ բնակվում 100.000 ռուս աշխատավորներ։

Թուրքեստանը հանդիսացել է քաղաքական աքսորյալների (նարոդնիկներ, պետրաշևականներ, սոցիալ-դեմոկրատներ) վայր։

Քանի որ Միջին Ասիայի միացումը փաստորեն ավարտվեց 80—90-ական թթ. ավելի ուշ, քան մյուս ազգային շրջանների միացումը, այդ պատճառով էլ պատմական արենա ելած ռուս բանվոր դասակարգը ղեկավարեց նրա պայքարը ոչ միայն ցարիզմի ու ֆեոդալական լծի, այլ նաև կապիտալիստական շահագործման դեմ։

Այդ տեսակետից խոշոր դեր կատարեց 1905—1907 թթ. ռևոլյուցիան։ Ռևոլյուցիայի ազդեցության տակ Թուրքեստանի աշխատավորությունը ավելի է կապվում ռուսական ռևոլյուցիոն շարժման և ռուս բանվոր դասակարգի հետ։ Ռուսական առաջին ռևոլյուցիան հզոր խթան է հանդիսացել Թուրքեստանում ազգային ազատագրական շարժման բնույթի փոփոխման, տեղական բնակչության քաղաքական դաստիարակության գործում։

Այնուհետև զեկուցողը հանգամանորեն ցույց է տալիս սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների գործունեությունը, մարքսիստական գրականության տարածումը, բոլշևիկյան թերթերի կատարած դերը։

Ռուսական առաջին ռևոլյուցիայի տարիներին Թուրքեստանում գործում էին 15 սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններ, այնտեղ հրատարակվում էին բոլշևիկյան լեգալ թերթեր՝ «Ռուսկիյ Թուրքեստան» (Տաշքենդում) և «Սամարկանդ» (Սամարկանդում)։ Ռևոլյուցիայի նախօրյակին և նրա տարիներին բավական լայն կերպով տարածվում էր մարքսիստական-լենինյան գրականությունը, լենինյան «Իսկրա», «Վպերիոդ», «Պրոլետարի», «Նովայա ժիզն», «Վոլնա», «Բորբա պրոլետարիատա» թերթերը։

Թուրքեստանի ՌՍԴԲՊ կազմակերպությունը մեծ տեղ էր տալիս ազգային հարցին, մասսաներին բացատրում նրա էությունը, խոշոր պրոպագանդիստական, բացատրական աշխատանք տանում բնակչության մեջ։

1905 թ. արդեն ռևոլյուցիոն-ազատագրական պայքարի պոռթկումներ են տեղի ունենում Թուրքեստանի շատ գյուղերում։ Բավական փաստեր կան ռուս աշխատավորության և տեղական բնակչության համատեղ պայքարը հավաստող։

1916 թ. Միջին Ասիայում և Ղազախստանում սկսվեց հզոր ազգային-ազատագրական շարժում, որը տարբեր պոռթկումներով շարունակվեց մինչև փետրվարյան ռևոլյուցիան։

1917 թ. ավելի ընդլայնվեց ու ամրապնդվեց ռուսական ռևոլյուցիոն շարժման և Միջին Ասիայի ժողովուրդների ռևոլյուցիոն-ազատագրական պայքարի կապերը։

«Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան արմատական հեղաշրջում է Միջին Ասիայի ժողովուրդների պատմական բախտում»,—այսպես էր զեկուցման հաջորդ թեման, որով հանդես եկավ պատմական գիտ. թեկնածու Շ. Թաշլիևը (Թուրքմենական ՍՍՌ Գիտությունների ակադեմիա)։ Զեկուցողը խոսելով Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հետևանքով սոցիալական և ազգային ճնշման վերացման մասին, ցույց է տալիս, որ Կոմունիստական պարտիայի և Սովետական իշխանության ազգային քաղաքականությունը արտահայտվել է «Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների դեկլարացիա»-ում և «Ռուսաստանի և Արևելքի մուսուլմանական աշխատավորությանը» կոչում։

Թուրքեստանում խաղաղ ճանապարհով իշխանությունը Սովետներին անցնելը ավելի բորբոքեց բուրժուական նացիոնալիստներին, որոնք 1917 թ. նոյեմբերի 27-ին Կոկանդում հրավիրեցին երկրամասի մուսուլմանական համագումար, ուր հռչակվեց «Թուրքեստանի ավտոնոմիա»-ն և ստեղծվեց բուրժուա-նացիոնալիստական կառավարություններ, որոնք սակայն երկար կյանք չունեցան։ 1918 թ. հունվարին Սովետների երկրամասային չորրորդ համագումարի պատվիրակները արտահայտվեցին բուրժուա-նացիոնալիստական կառավարությունների դեմ, իսկ նույն թվականի ապրիլին գումարված Սովետների հինգերորդ համագումարը Թուրքեստանը հռչակեց ավտոնոմ ռեսպուբլիկա ՌՍՖՍՌ-ի կազմում։ Թուրքեստանի հաղթանակը խոշոր ռևոլյուցիոնականացնող նշանակություն ունեցավ Բուխարայի էմիրության և Խիվայի խանության վրա, որտեղ 1920 թ. սկզբներին հաստատվեցին սովետական կարգեր։

Սովետական իշխանությունը Թուրքեստանում ամրապնդելու նպատակով 1919 թ. այնտեղ ուղարկվեց ԿԳԿ և ՌՍՖՍՌ ժողկոմխորհի կոմիսիան, որի կազմում էին այնպիսի խոշոր պարտիական և պետական գործիչներ, ինչպիսիք են՝ Մ. Վ. Ֆրունզեն, Վ. Վ. Կույբիշևը, Շ. Զ. Էլիավան, Յա. Է. Ռուձուտակը, Ֆ. Ի. Գոլոշչեկինը և ուրիշները։

Զեկուցողը այնուհետև հարուստ փաստեր է բերում պրոլետարական, գյուղատնտեսական, առողջապահական, մանկավարժական առաջավոր կադրերով, Միջին Ասիայի ժողովուրդներին ռուս ժողովրդի ցույց տված եղբայրական օգնության մասին։

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի ծնունդ հանդիսացող Միջին Ասիայի ազգային ռեսպուբլիկաների գոյությունը վառ օրինակ են հանդիսանում ճնշվող ազգերի համար և մեծ թափ հաղորդում Արևելքում ազգային-ազատագրական շարժմանը։

ՍՍՌՄ ԳԱ թղթակից-անդամ Ա. Արդուլաևը, տնտ. գիտ. դոկտոր Ա. Ամինովը և Ուզբեկական ՍՍՌ ԳԱ իսկական անդամ Ի. Մումինովը զեկուցում արին «ՍՍՌՄ սոցիալիզմի հաղթանակի հետևանքով Միջին Ասիայի ազգային ռեսպուբլիկաներում արդյունաբերության, գյուղատնտեսության և ժողովրդական բարեկեցության վերելքը» թեմայով։

Հոկտեմբերյան ռևոլյուցիայից հետո ամենայն սրությամբ դրվեց տնտեսապես և կուլտուրապես հետամնաց ազգային փոքրամասնությունների հարցը։ Պարտիան իր գործունեության հիմք դարձրեց Լենինի հայտնի ցուցումը, ըստ որի առաջավոր երկրի պրոլետարիատի օգնությամբ հետամնաց երկրները կարող են միանգամից անցնել սոցիալիզմին՝ շրջանցելով կապիտալիստական զարգացման ստադիան։

Զեկուցողները փորձ են անում Միջին Ասիայի ազգային ռեսպուբլիկաներում համառոտակի բնութագրել սոցիալիստական վերափոխության պատմական փորձը։

Նրանք սովետական հասարակարգի զարգացման պատմությունը բաժանում են երեք հիմնական շրջանների՝ կապիտալիզմից սոցիալիզմի անցման, սոցիալիզմի լրիվ ու վերջնական հաղթանակի և կոմունիզմի ծավալուն կառուցման շրջանի։

Սոցիալիզմից կոմունիզմին անցնելու շրջանում պարտիան Միջին Ասիայում հիմնականը համարում էր տնտեսության և կենցաղի մեջ ֆեոդալական-նահապետական և բուրժուական հարաբերությունների լիկվիդացիան։ Բազմաթիվ փաստերով ցույց է տրվում միջինասիական ժողովուրդների ձեռք բերած խոշոր հաջողություններն այդ ասպարեզում։

ՍՍՌՄ-ում սոցիալիզմի լրիվ և վերջնական կառուցման երկրորդ էտապում ցցուն կերպով երևան եկավ Միջին Ասիան Ռուսաստանին միացնելու խոշոր պրոգրեսիվ նշանակությունը։ Միացման շնորհիվ միջինասիական ժողովուրդները կարողացան սոցիալիզմ կառուցել նախկինում տնտեսական ավելի բարձր աստիճանում կանգնած ժողովուրդների հետ միաժամանակ։

Այժմ Միջին Ասիայի ժողովուրդները Սովետական Միության մյուս ժողովուրդների հետ միասին թևակոխել են պատմական նոր շրջան՝ կոմունիստական հասարակարգի ծավալուն կառուցման ժամանակաշրջան, որի ընթացքում այդ ռեսպուբլիկաների էկոնոմիկայում նոր որակական փոփոխություններ են կատարվելու։

Ամեն մի էպոխան բնորոշող ժողովրդական տնտեսության և կուլտուրայի վերաբերյալ զեկուցման մեջ բերված հարուստ փաստերից երևում է, որ Միջին Ասիայի ժողովուրդները պատմական համեմատաբար կարճ ժամանակաշրջանում ձեռք են բերել հսկայական, իրոք համաշխարհային-պատմական նշանակություն ունեցող հաջողություններ։

«Կուլտուրական ռևոլյուցիան Միջին Ասիայի ռեսպուբլիկաներում, որպես Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի կարևորագույն արդյունքներից մեկը» զեկուցումով հանդես եկավ Կիրգիզական ՍՍՌ ԳԱ իսկական անդամ Ա. Ալթմիշբաևը։

Զեկուցողը նշում է, որ Միջին Ասիայում, Լենինի խոսքերով ասած, իշխում էր նահապետականություն, կիսավայրենություն և հենց իսկական վայրենություն։ Ճիշտ է, ուզբեկները, տաջիկները և ղազախները ավելի առաջ էին անցել թուրքմենների, կիրգիզների և կարակալպակների նկատմամբ, սակայն տարբերությունը մեծ չէր։ Նրանց բոլորի մոտ էլ հավասար կերպով տիրում էր նահապետականությունը։

Սովետական իշխանության տարիներին կուլտուրական ռևոլյուցիայի հետևանքով միանգամայն այլ պատկեր է ստացվել։ Կուլտուրական ռևոլյուցիայի ամենակարևոր արդյունքներից մեկն այն է, որ Միջին Ասիայում վե-

բացվել է անգրագիտությունը, ձևավորվել ու զարգացել է ազգային ինտելիգենցիան, իր մեջ ընդգրկելով բազմազան ու բազմատեսակ մասնագետներ։ Բավական է նշել, որ միայն Ուզբեկստանում կան 200.000 մասնագետներ, բարձրագույն, միջնակարգ մասնագիտական կրթությամբ, այսինքն այնքան, որքան ցարական ողջ Ռուսաստանում 1913 թվականին։

Կինը, որ հնում ստրկուհի էր ինչպես տանը, այնպես էլ հասարակական կյանքում, այժմ երկրի տնտեսական, քաղաքական և կուլտուրական կյանքում չկա մի այնպիսի բնագավառ, որտեղ նա ակտիվ մասնակցություն չունենա։

Այնուհետև զեկուցողը հարուստ փաստական նյութով ցույց է տալիս միջինասիական ժողովուրդների սոցիալիստական կուլտուրայի ձևի և բովանդակության, գիտության, լուսավորության, ժողովրդական կրթության, առողջապահության ընագավառներում, մարդկանց հոգեկան աշխարհում կատարված վիթխարի փոփոխությունները։

Վերջին զեկուցումը՝ «Սովետական Արևելքում սոցիալիզմի հաղթանակի միջազգային նշանակությունը» թեմայով կարդաց ակադեմիկոս Ի. Մինցը։

Զեկուցողը առաջ է քաշում Միջին Ասիայի ժողովուրդների պատմության մի քանի կարդինալ հարցեր, որոնք միջազգային խոշոր նշանակություն ունեն և ազդում են մասնավորապես Արևելքի ժողովուրդների պայքարի ընթացքին։ Դրանցից հիմնականներն են. Սովետական իշխանության առաջին տարիներին ազգային հարցի լուծումը և պատմական շատ կարճ ժամանակաշրջանում շահագործումը, տնտեսական-կուլտուրական հետամնացությունը հաջող կերպով լիկվիդացնելու Միջին Ասիայի ռեսպուբլիկաների փորձը։ Այդ փորձը աշխարհի կախյալ ու գաղութային երկրներին տվեց շահագործումից ազատվելու և նոր հասարակարգ կառուցելու օրինակ։ Միջին Ասիայում իրագործված կուլտուրական ռևոլյուցիան մեծ նշանակություն ունի ազգային ազատագրության համար պայքարող ժողովուրդների համար։

Զեկուցումներից հետո տեղի ունեցավ մտքերի լայն ու բազմակողմանի փոխանակություն, որին մասնակցեցին երեսուն ընկերներ։

Ինչպես զեկուցողները, այնպես էլ ելույթ ունեցողներից շատերը (Ս. Յակուբովսկայա, Ա. Ֆադեև, Ուրազալիև և ուրիշներ), բազմաթիվ փաստեր բերեցին, թե ինչպես բուրժուական պատմագրությունը իր կաշվից դուրս է գալիս, ցույց տալու համար, որ իբր Միջին Ասիայի ռեսպուբլիկաները զրկված են սուվերենիտետից ու իրավունքից, նրանց ժողովուրդները շարունակում են ճնշվել ու շահագործվել։

Ամերիկյան պատմաբան Ռիչարդ Պոսիսպը (Հարվարդի համալսարան) «գտնում է», որ Սովետական իշխանությունը իր ազգային քաղաքականությամբ Միջին Ասիայում ստեղծել է տարբեր ազգեր, այնտեղ իրավամբ մեկ ազգ կա, դա մուսուլմանական ազգն է։ Նրա կարծիքով Թուրքեստանի ժողովուրդը այնքան չի հասունացել, որ ունենա իր սեփական պետականությունը։

Անգլիական պատմաբան Վիլերը 1956 թ. հրատարակած «Ռուսները և Միջին Ասիան» հոդվածում ճգնում է ցույց տալ, որ Միջին Ասիայում Սովետական իշխանության վարած քաղաքականությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ ցարիզմի քաղաքականության շարունակությունը։

Միջին Ասիայի սովետական ռեսպուբլիկաների գոյությունը, տնտեսության և կուլտուրայի բնագավառում նրանց ձեռք բերած աննախադեպ հաջո-

գությունները ինքնաստինքյան մերկացնում են բուրժուական պատմաբանների հերյուրանքները։

Մտքերի բախում և աշխույժ փոխանակություն տեղի ունեցավ մասնավորապես պրոֆ. Պյասկովսկու զեկուցման շուրջը։

Ընկ. ընկ. Զ. Ռաջաբովը, Երևանը (Տաջիկական ՍՍՌ), Նարիևը, Քամալովը (Ուզբեկական ՍՍՌ), Սաֆրամանը (Թուրքմենական ՍՍՌ) դեմ են արտահայտվում և քննադատում Պյասկովսկու Միջին Ասիան Ռուսաստանի կողմից զենքի ուժով գրավվելու տեսակետը։ Նրանք հիշեցնելով Հյուսիսային Կիրգիզիայի, Թուրքմենիայի և Տաջիկստանի մի շարք շրջանների կամավոր միացումը գտնում են, որ Միջին Ասիան իր հիմնական մասով ոչ թե գրավվել, այլ կամավոր միացել է Ռուսաստանին։

Պրոֆ. Ա. Ֆադեևը (Մոսկվա), Սուլեյմանովը (Ղազախական ՍՍՌ), Ռոսլյակովը (Թուրքմենական ՍՍՌ) պաշտպանում են Պյասկովսկու տեսակետը։

Ելույթ ունեցողների մեծ մասի կողմից իրավացի կերպով հարց բարձրացվեց բազմակողմանիորեն ուսումնասիրել նախկին Թուրքեստանի տարբեր մասերի ու ժողովուրդների միացման շրջանի պատմության բոլոր կողմերն ու երևույթները և պարզել, թե կոնկրետ Միջին Ասիայի որ մասը պատմական ինչ պայմաններում և ինչպիսի եղանակով է միացել Ռուսաստանին։

Պրոֆ. Ս. Տոլստովը (Մոսկվա), Ս. Ադաջանովը (Թուրքմենական ՍՍՌ) իրենց ելույթները նվիրեցին Միջին Ասիայի ժողովուրդների և Ռուսաստանի պատմական կապերին ու շփումներին, մի հարց, որը սեսիայում համեմատաբար թույլ լուսաբանվեց։

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի ներկայացուցիչ Ծ. Աղայանն իր ելույթում, անալոգիայի կարգով, համառոտակի ուրվագծեց Հայաստանի սոցիալ-տնտեսական ու քաղաքական ծանր վիճակը Ռուսաստանի հետ միանալու նախօրյակին և ցույց տվեց միացման խոշոր պրոգրեսիվ դերը հայ ժողովրդի համար։ Այնուհետև պրոֆ. Ծ. Աղայանը նշեց Հայաստանի ու Անդրկովկասի համեմատությամբ Միջին Ասիան Ռուսաստանին միացնելու տարբերություններն ու յուրահատուկ կողմերը։

Սեսիայի աշխատանքներն ամփոփեց ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի պատմական գիտությունների ակադեմիկոս-քարտուղար Ե. Մ. Ժուկովը։ Նշելով, որ սեսիայի ընթացքում տարաձայնություններ եղան հատկապես Միջին Ասիան Ռուսաստանին միացնելու հարցում նա դատում է, որ երկու ծայրահեղություններից էլ անհրաժեշտ է խույս տալ։ Ընկերների մի մասը միացման հարցը այնքան լայն են վերցնում, և միջինասիական ժողովուրդների կյանքում կատարված տեղաշարժերն այն աստիճան վերագրում նրան, որ ակամայից, որոշ առումով, նսեմացնում է Հոկտեմբերյան ռևոլյուցիայի դերը։ Պատմական իրականությանը չի համապատասխանում նաև հակառակ տեսակետը, որը հանգեցնում է մինչհոկտեմբերյան շրջանի Ռուսաստանի կատարած դրական դերի թերագնահատմանը։ Բոլոր դեպքերում անհրաժեշտ է նկատի առնել և ելնել այն հանգամանքից, որ Միջին Ասիան Ռուսաստանին միացնելու ձևը, ինչպիսին էլ որ լինի նա, չի կարող խանգարել կամ հակասել նրա խոշոր պրոգրեսիվ նշանակությանը։

Սեսիայում տեղի ունեցած մտքերի լայն փոխանակությունը, ասում է ակադ. Ժուկովը, անկասկած կնպաստեն սովետական Արևելքի ժողովուրդների պատմության ակտուալ հարցերի բազմակողմանի մշակմանը։

Նա գտնում է, որ սեսիայում թույլ լուսաբանվեց կամ դրեթե չլուսաբանվեց միացման տնտեսական, քաղաքական, մասամբ նաև կուլտուրական նշանակությունը Ռուսաստանի համար։

Իր ելույթի վերջում Ե. Ժուկովը պատմաբանների առաջ խնդիր է դնում ուժեղացնելու պայքարը բուրժուական իդեոլոգիայի դեմ, որը կանգ չառնելով փաստերը կեղծելու առաջ, աշխատում է սեպ խրել ինչպես Սովետական Միության մյուս ժողովուրդների, այնպես էլ ռուս և միջինասիական ժողովուրդների բարեկամության մեջ։

Սեսիան անցավ գիտական և քաղաքական բարձր մակարդակով, ՍՍՌՄ ժողովուրդների անխախտ բարեկամության նշանաբանով։

Վ. Բ. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ